

Միջազգային համագործակցություն

Կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքը ենթադրում է նաև մշտական ակտիվ համագործակցություն տարբեր երկրների կանխարգելման ազգային մեխանիզմների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների, ոլորտի միջազգային կառույցների ու կազմակերպությունների և այլ գործընկերների հետ:

Այսպես, Պաշտպանն ապահովում է մշտական կապ ՄԱԿ-ի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտեի, ինչպես նաև միջազգային համապատասխան այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ տեղեկությունների փոխանակման և նրանց հետ հանդիպումների միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ կազմում և միջազգային կազմակերպություններին է ներկայացնում զեկույցներ ներպետական մակարդակում խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելման մակարդակի վերաբերյալ (օրինակ՝ Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների՝ Հայաստանի կողմից պահպանման վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումը հասանելի է հետևյալ հղումով՝

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCAT%2fNHS%2fARM%2f25924&Lang=en):

«Վ մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև միջազգային համագործակցությունը մարդու իրավունքների ապահովման, ինչպես նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի բացառման հարցում միջազգային չափանիշները ներպետական օրենսդրություն ու իրավակիրառ պրակտիկա ներմուծելու իմաստով:

Այս տեսանկյունից անգնահատելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի դերը:

Որպես «Դատարանի ընկեր» հանդիսացող անկախ կառույց՝ «Վ մարդու իրավունքների պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան Հակոբյանն ընդդեմ Հայաստանի գործով երրորդ կողմ ներգրավվելու վերաբերյալ, որը 2018 թվականի հուլիսին հաստատվել է: Սա միջազգային փորձի և մարդու իրավունքների ազգային հաստատության կողմից բացառիկ նախաձեռնության լավագույն օրինակ է:

Եվրոպական դատարանում գործի քննությանը մասնակցելը հնարավորություն է տվել Պաշտպանին իր լիազորությունների իրականացման արդյունքում ձեռք բերված՝ կոնկրետ

գործին առնչվող, ինչպես նաև համակարգային խնդիրների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Դատարանին:

Եվրոպական դատարանի վճիռների կատարման հարցում համագործակցության մեկ այլ միջոց է Եվրոպական դատարանի վճիռների և բարեկամական կարգավորումների կատարման վերահսկման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կանոնակարգի 9-րդ կանոնի 2-րդ կետը, ըստ որի՝ Նախարարների կոմիտեն քննարկում է մարդու իրավունքների խթանման և պաշտպանության վերաբերյալ ազգային հաստատությունների՝ Եվրոպական դատարանի վճիռների կատարմանն առնչվող դիրքորոշումները:

Առաջնորդվելով նշված դրույթով Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության ընթացքում առաջին անգամ 2018 թվականին Պաշտպանը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե է ներկայացրել հատուկ դիրքորոշում՝ կապված Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով ազատությունից զրկված անձի առողջության պահպանման իրավունքին առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռի կատարման հետ: